

ՄԻԼԵՆԱ ԱՐԱՋԱՆՅԱՆ

Կառավարում,
բակալավորիա, 4-րդ կուրս

ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ՝ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՆ

Հիմնաբառեր. գործարար միջավայր, գործոն, խոչընդոտ,
զեկույց, ռազմավարություն

Գործարար միջավայրի ուսումնասիրությունն ու վերլուծությունը, դրանից բխող բարելավման նպատակադրումները մշտապես արդիական են: Հայաստանի Հանրապետության տնտեսության ներկայիս վիճակը, առկա բազմաթիվ խնդիրներով, ազդում է գործարար միջավայրի, դրա վարկանիշի վրա: Մի շարք համընդհանուր գործոնների թվում առավել հաճախադեպ են և իրենց բացասական ազդեցությունն են ունենում օրենսդրության պարբերական փոփոխությունները, քաղաքական ռիսկերը, կոռուպցիան, դատական համակարգի անկախությունը, վարկերի բարձր տոկոսադրույքները և այլն: Այս և մի շարք այլ խնդիրների լուծման նպատակով Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից մշակվել է ՀՀ գործարար միջավայրի բարելավման 2019-2024 թվականների ռազմավարությունը, որն ուղղված է գործարարության բարենպաստ միջավայրի ստեղծմանը:

Ներածություն: Տնտեսության ամենակարևոր շարժիչ ուժերից մեկը, եթե ոչ ամենակարևորը, բարենպաստ գործարար միջավայրի առկայությունն է: Ընդհանուր առմամբ, գործարար միջավայրը արտաքին ու ներքին միջավայրերի գործոնների համախումբ է, ըստ որի և որի ազդեցությամբ գործում է բիզնեսը: Այդ միջավայրի կայունությունը, զարգացման մակարդակը, դրանում առկա հնարավորությունները և խոչընդոտները ուղղակի ու անուղղակի կերպով պայմանավորում են տվյալ երկրում գործարարության ակտիվության և դյուրինության մակարդակը:

Գործարար միջավայրը յուրաքանչյուր երկրի տնտեսական և սոցիալական կայունության հիմնական երաշխիքն է, որի զարգացումը հնարավորություն է ընձեռում մեղմելու անցումային տնտեսություններին բնորոշ տնտեսական և սոցիալական ռիսկերը, հետևաբար՝ գործարար միջավայրի զարգացումն ազդում է տվյալ երկրի կյանքի որակի բարձրացման վրա:

Ուետք է նշել, որ գործարար միջավայրի ուսումնասիրության գործում ներգրավված են միջազգային տարբեր կառույցներ, մասնավորապես, ըստ Համաշխարհային բանկի, գործարար միջավայրը գործոնների համախումբ է, որը բնութագրում է տվյալ երկրի առևտրային կազմակերպությունների՝ գործարարությամբ զբաղվելու մոտիվացիան՝ արդյունավետ ներդրումային քաղաքականության, նոր աշխատատեղերի ստեղծման, համաշխարհային մրցակցային շուկաներին ինտեգրման արդյունքում:

Գրականության ակնարկ: «Գործարար միջավայր» տնտեսագիտական հասկացության տարբեր սահմանումներ կան: Այսպես, ըստ Ֆիլ Քելիի՝ գործարար միջավայրը բոլոր պայմանների, իրադարձությունների ամբողջությունն է, որոնք շրջապատում և ազդում են վերջինիս վրա¹, իսկ ըստ Քեյթ Դեյվիսի՝ գործարար միջավայրն այն բոլոր պայմանների, իրադարձությունների, նաև ազդեցությունների հանրագումարն է, որոնք շրջապատում և ազդում են դրա վրա: Մեկ այլ սահմանման համաձայն՝ գործարար միջավայրը հիմնականում

¹ Տե՛ս Phil Kelly and Ashwin, The Business Environment, 2013, էջ 78-81:

վերաբերում է արտաքին միջավայրին և ներառում է ընկերությունից դուրս գտնվող գործոններ, որոնք կարող են ստեղծել հնարավորություններ կամ սպառնալիքներ: Ներկայացված բոլոր սահմանումների բովանդակությունը, ըստ էության, համընկնում է. դրանք արտահայտում են գործարար միջավայրի կարևորությունը:

Մեթոդաբանություն: Վճարային քարտերին վերաբերող տվյալները վերցված են ՀՀ կենտրոնական բանկի (ԿԲ), ՀՀ բանկերի միության (ՀԲՄ) և ՀՀ վիճակագրական կոմիտեի (ՀՀ ՎԿ) առկա բաց հրապարակային նյութերից, իսկ հետազոտությունն իրականացվել է վերլուծության, համադրման, խմբավորման, համեմատման, ընդհանրացման մեթոդների համակողմանի կիրառմամբ:

Համաշխարհային բանկի կողմից ամենամյա հրապարակվող Doing Business զեկույցը տարբեր երկրների գործարար միջավայրի գնահատման համընդհանուր մոտեցման հիմքն է: Գնահատումն իրականացվում է ըստ գործարարությամբ զբաղվելու դյուրինության 10 ենթահամաթվերի: Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից ընդունված «ՀՀ գործարար միջավայրի բարելավման 2019-2024 թվականների ռազմավարությունը» միտված է գործարարությամբ զբաղվելու համար բարենպաստ միջավայրի ստեղծմանը: Գործարար միջավայրի բարելավման ռազմավարության շրջանակում ընդգրկված ուղղություններն ամբողջովին հիմնվում են «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի գնահատման մեթոդաբանության վրա: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ գործարար միջավայրի բարելավման ռազմավարության թիրախների չափման մեթոդաբանության հիմքում դրվում են «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի չափանիշները՝ համապատասխան ենթացուցիչներով՝ որպես չափողականության օբյեկտիվությունն ու լիարժեքությունն ապահովող օպտիմալ գործիք:

Հետազոտության իրականացման համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել նաև գործարար հանրույթի ներկայացուցիչների հետ անցկացված հարցումները և դրանց արդյունքները:

Հետազոտության արդյունքներ և քննարկում: Գործարար միջավայրը բիզնեսին կամ ձեռնարկությանը շրջապատող արտաքին միջավայրն է, որում ներառվում են այն գործոնները, որոնք գտնվում են կազմակերպության վերահսկողությունից դուրս, սակայն սերտորեն փոխգործակցում են դրա հետ, ուղղակի կամ անուղղակի կերպով ազդում են կազմակերպության կամ դրա առանձին բաղադրամասերի վրա¹: Գործարար միջավայրը ձևավորվում է կազմակերպության գործունեությանը զուգահեռ և կարող է փոփոխվել՝ կապված շուկայի, գործունեության ոլորտի, ռազմավարության փոփոխությունների հետ: Տնտեսական քաղաքականության արդյունավետ իրականացման համար գործարար միջավայրը հանդես է գալիս որպես տնտեսական, սոցիալ-մշակութային և քաղաքական պայմանների ամբողջություն:

Գործարար միջավայրի վրա ազդում են շրջակա միջավայրը, հասարակության մեջ տարածված արժեքային համակարգը, կառավարության կողմից ընդունված օրենքները, դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունը, օտարերկրյա կապիտալի և ձեռնարկությունների նկատմամբ կառավարության վերաբերմունքն ու քաղաքականությունը և այլն²:

¹ Տե՛ս **Fernando A. C.**, Business Environment, Pearson Education, 2011, էջ 33-36:

² Տե՛ս նույն տեղը:

Գործարար միջավայրը բաղկացած է մի շարք գործոններից, և դրանցից յուրաքանչյուրը յուրովի է ազդում բիզնեսի վրա: Որոշ գործոններ ուղղակիորեն են ազդում ընկերության գործունեության վրա, որոշ գործոններ՝ անուղղակի: Դրանք ինչպես հնարավորություններ, այնպես էլ սպառնալիքներ և մարտահրավերներ են ստեղծում ձեռնարկությունների համար: Այսպիսով, գործարար միջավայրը բազմակողմանի է և բնույթով բարդ: Ընդ որում, դրա յուրաքանչյուր գործոն պահանջում է առանձին ուսումնասիրություն:

Ստորև ներկայացված են այն հիմնական գործոնները, որոնք ազդում են գործարար միջավայրի վրա.

1. աշխարհագրական և բնապահպանական կամ բնական գործոններ,
2. ժողովրդագրական գործոններ,
3. տնտեսական գործոններ,
4. քաղաքական և իրավական գործոններ,
5. սոցիալական և մշակութային գործոններ,
6. տեխնոլոգիական գործոններ¹:

Աշխարհագրական և բնապահպանական կամ բնական գործոններ: Աշխարհագրական պայմաններն ազդում են տարածաշրջանում արդյունաբերության և բիզնեսի տեսակի վերաբերյալ որոշումների վրա: Դա պայմանավորված է նրանով, որ որոշակի աշխարհագրական տարածաշրջանի բնակիչներն ունեն նույնանման ճաշակ, նախասիրություններ և պահանջներ: Սովորաբար, այն ապրանքները, որոնք հիմնականում նախընտրում են մի տարածաշրջանի բնակիչները, կարող են հավանության չարժանանալ մեկ այլ տարածաշրջանում:

Բնապահպանական գործոնները ներառում են բնական ռեսուրսները, ինչպիսիք են գյուղատնտեսական հողերը, անտառ ները, օգտակար հանածոները, էներգիան, օդը և ջուրը: Այս ռեսուրսների պաշարները խիստ սահմանափակ են, հետևաբար դրանց օգտագործումը պետք է լինի նպատակային:

Ժողովրդագրական միջավայրը ներառում է մի շարք այնպիսի ենթագործոններ, ինչպիսիք են բնակչության թվաքանակը, աճը, սեռատարիքային կազմը, կրթական մակարդակը, լեզուն, կրոնը և այլն:

Տնտեսական միջավայրն արտացոլում է այն տնտեսության էությունն ու ուղղվածությունը, որում գործում է բիզնեսը և բաղկացած է երեք կարևոր գործոններից՝ տնտեսական համակարգեր, տնտեսական քաղաքականություն և տնտեսական պայմաններ: Այս միջավայրի ազդեցությունը շատ ավելի անմիջական և նպատակային է, քան մյուս գործոններինը:

Կառավարության տնտեսական քաղաքականությունը որոշիչ ազդեցություն ունի տնտեսավարող սուբյեկտների վրա: Նույնիսկ առևտրային կազմակերպությունների գոյատևումը կախված է այն հանգամանքից, թե ինչպես են դրանք արձագանքում կառավարության քաղաքականությանը:

Առևտրային կազմակերպությունների մեծ մասի վրա ազդում են միջազգային այնպիսի գործոններ, ինչպիսիք են գնաճի մակարդակն այն երկրներում, որոնց հետ նրանք ունեն առևտրային հարաբերություններ: Նմանապես, տարբեր երկրների կողմից ստեղծված առևտրային արգելքներն են (ներառյալ մաքսատուրքերը) ազդում տեղական ընկերությունների և դրանց արտահանման ջանքերի վրա:

¹ <https://accountlearning.com/6-important-factors-business-environment-influence-business/?fbclid=IwAR1KajUDyAorWFTYgsnzhZYzVch4Zg5uKoDqrV82IHvWVtoaqo3FRT35E-o>

Քաղաքական և իրավական միջավայր: Տնտեսական միջավայրը սերտորեն կապված է քաղաքական և իրավական միջավայրի հետ: Այս միջավայրը օրենքների և կանոնակարգերի հիմքն է, որի շրջանակներում ձեռնարկությունները պետք է իրականացնեն իրենց գործունեությունը: Պետության վերահսկողության աստիճանը կամ ուղղորդումը առանձին երկրներում կարող է տարբեր լինել: Ամենից առաջ կազմակերպություններին հետաքրքրում է պետության քաղաքականությունը հարկային, վարկային, արտաքին առևտրի, ներդրումների ոլորտներում, սեփականատիրական հարաբերություններում: Պետական քաղաքականության այս բաղադրիչները և դրանցում կատարվող փոփոխությունները վճռական նշանակություն ունեն գործարարության արդյունքների վրա: Գործոնների այս խմբում կարևորվում են նաև քաղաքական իրադարձությունների ընթացքը, ներքին և արտաքին կայունությունը, իշխանությունների, քաղաքական կուսակցությունների հաջորդափոխությունը:

Սոցիալական և մշակութային միջավայր: Այս միջավայրը մեծ մարտահրավեր է բիզնեսի համար, և անհրաժեշտ է այս կարևոր գործոնին պատշաճ ուշադրություն դարձնել բիզնես ռազմավարություններ և քաղաքականություն մշակելիս: Սոցիալական միջավայրը հասարակության ընդհանուր միջավայրն է, որում ներգրավված է յուրաքանչյուր մարդ: Մշակութային միջավայրը բոլոր ենթամշակույթների ամբողջությունն է, որոնցից յուրաքանչյուրն ունի իր սեփական հասկացությունները և համոզմունքները: Հասարակությունը ստատիկ չէ, այն ժամանակի ընթացքում ենթարկվում է որոշակի փոփոխությունների, առաջանում են նոր կարիքներ: Ձեռնարկությունները պետք է մշտապես վերահսկեն ընթացիկ փոփոխությունները և անհրաժեշտ ճշգրտումներ կատարեն իրենց արտադրական ու շուկայավարման ծրագրերում և ռազմավարություններում՝ սոցիալական նոր պահանջներին համապատասխանելու համար:

Տեխնոլոգիական գործոնները չափազանց կարևոր են տնտեսական մրցակցությանը դիմանալու, շուկայում կայուն դիրք գրավելու համար: Դրանք գիտության և տեխնիկայի զարգացման շնորհիվ առաջացող տեխնոլոգիական փոփոխություններն են, ինչպես նաև տեղեկատվական համակարգերում առաջընթացը: Գիտատեխնոլոգիական գործոնների ուսումնասիրությունը թույլ է տալիս ճիշտ ժամանակին բացահայտել գիտության և տեխնիկայի ընձեռած հնարավորությունները:

Վերոնշյալ գործոնները կարող են ինչպես խթանել, այնպես էլ խոչընդոտել գործարար միջավայրի զարգացումը՝ կախված տվյալ երկրի առանձնահատկություններից, աշխարհագրական դիրքից, տարածաշրջանում տնտեսական և քաղաքական կայունության աստիճանից և այլն:

Այս գործոնների ազդեցությունից զատ, առկա են մի շարք այլ խնդիրներ, որոնք խոչընդոտում են ՀՀ ինչպես գործարար, այնպես էլ ներդրումային միջավայրի բարելավումը:

Այդպիսի խոչընդոտներից է Հայաստանում *դպրական համակարգի անկարգությունը* և այս համակարգի նկատմամբ վստահության պակասը: Հայաստանում դատական համակարգն անկախ չէ, տեղական և օտարերկրյա ներդրողները դատական համակարգը չեն համարում վստահելի: Որպես խնդիրներ առանձնանում են նաև դատական գործընթացների չափից դուրս

երկար տևողությունը, փաստաբանական որակյալ ծառայությունների անհասանելիությունը, բռնազանձման գործընթացի անհուսալիությունը¹:

Կոռուպցիոն համակարգը, որը ներառում է պետական և մասնավոր հատվածներում գոյություն ունեցող կոռուպցիան, խոչընդոտում է Հայաստանում ներդրումներ կատարելու և բիզնես հիմնելու գործընթացը: *Բյուրոկրատական համակարգի* հիմքում ընկած վարչարարական դժվարությունները և բարենպաստ ինստիտուցիոնալ միջավայրի բացակայությունը ևս զանազան ռիսկեր են ստեղծում գործարար միջավայրի համար²:

Հարկային բեռը և հարկային վարչարարությունը զգալի ժամանակ և ծախսեր են պահանջում գործարարներից՝ իրենց հարկային պարտավորությունները կատարելու համար: Հայաստանում բավականին խճճված է հարկային դաշտը, ինչը հնարավորություն չի տալիս սկսնակ կամ գործող բիզնեսին իրականացնելու ֆինանսական միջոցների արդյունավետ պլանավորում: Համաձայն տարբեր փորձագետների գնահատականների՝ հարկային օրենսգիրքը խճճված և բարդ է անգամ ոլորտային մասնագետների համար, ինչի պատճառով ՓՄՁ-ներին պարտադրվում է դիմել իրավաբանների կամ հաշվապահների մասնագիտացված խորհրդատվության, որն էլ պահանջում է հավելյալ ծախսեր³:

Վարկերի ապահովությունը Հայաստանում ամենաբարդ խնդիրներից մեկն է: Վարկատուները, վարկերի տրամադրումը գերանվտանգ դարձնելու նպատակով, հատկապես սկսնակ գործարարներին պարտադրում են կատարել բարդ պահանջներ և ավելորդ ծախսեր: Առևտրային բանկերը պահպանողական են և գերադասում են ֆինանսավորել առավելապես գործող խոշոր կազմակերպություններին, քան փոքր կամ սկսնակ ձեռնարկություններին, որոնք չունեն իրենց ֆինանսական վճարունակության ծանրակշիռ ապացույցներ: Փոքր ձեռնարկատերերին սահմանափակ վարկավորում տրամադրելու հիմնական պատճառներից մեկը ֆինանսական պատմության բացակայությունն է: Սկսնակ բիզնեսի վարկավորման մյուս խնդիրը կապված է վարկավորման գումարի չափի հետ, որը, որպես ներդրումային կապիտալ, չի բավականացնում նախատեսվող ծախսերի կատարման համար⁴:

Գործարար միջավայրի զարգացմանը խոչընդոտում են *մաքսային ծառայությունների հետ կապված տարբեր խնդիրներ*: Մաքսային ծառայություններին առնչվող խնդիրները կարելի է դասակարգել հետևյալ կերպ՝

- հարկային և մաքսային մարմիններում առկա կոռուպցիա,
- հարկային և մաքսային ընթացակարգերում թափանցիկության և արդարության բացակայություն,
- մաքսագերծման ընթացակարգերի ձգձգում,
- հսկիչ գների կիրառման խնդիր,
- երկակի նշանակություն ունեցող ապրանքների մաքսագերծման ընթացակարգերի խնդիր,
- բարձր մաքսային տուրքեր,

¹ Տե՛ս ՓՄՁ ոլորտի գնահատման հետազոտություն Հայաստանում, հայկական բիզնես կոալիցիա, Եր., 2018, էջ 31:

² Տե՛ս «Բանբեր ՀՊՏՀ», 2021, N1, «Տնտեսագետ» հրատարակչություն, էջ 72:


³ Տե՛ս ՓՄՁ ոլորտի գնահատման հետազոտություն Հայաստանում, հայկական բիզնես կոալիցիա, Եր., 2018, էջ 32:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 47:

- մաքսային ծառայությունների կողմից պահանջվող մեծ թվով հատուկ հավաստագրեր և լաբորատոր թեստեր:

ՀՀ մասնավոր հատվածի ներկայացուցիչների շրջանում արված մեկ այլ հարցման արդյունքներով՝ ձեռնարկատիրության շատ խնդրահարույց խոչընդոտների շարքում հարցվողներն առանձնացրել են հարկային համակարգը (հարցվողների 38%-ը նշել է այս տարբերակը), կոռուպցիան (73%), ֆինանսական ռեսուրսների անմատչելիությունը (34%), դատական համակարգի անկատարությունը (30%), մաքսային ծառայությունների հետ կապված խնդիրները (30%):

Գործարար միջավայրի վրա պետական քաղաքականության ազդեցությունը կարելի է գնահատել **գործարարությամբ զբաղվելու դյուրինություն** համաթվի միջոցով: Այսպես, գործարարությամբ զբաղվելու դյուրինություն համաթվով Հայաստանը 2018-2020 թթ. ընթացքում վատթարացրել է իր դիրքն աշխարհում՝ այլ երկրների համեմատ կորցնելով մրցակցային առավելությունները: Մասնավորապես, 2017 թ. աշխարհում 38-րդ հորիզոնականը զբաղեցնելուց հետո 2018-ին ՀՀ դիրքն էապես թուլացել է, ինչի հետևանքով համաշխարհային սանդղակում ՀՀ-ն հայտնվել է 47-րդ հորիզոնականում: 2019 թ. թեև նկատվել է դիրքային որոշակի բարելավում (41-րդ հորիզոնական), այդուհանդերձ, 2020-ին կրկին Հայաստանը թուլացրել է իր դիրքերը՝ վերադառնալով 47-րդ հորիզոնական:




Գծապատկեր 1. Հայաստանի՝ գործարարությամբ զբաղվելու դյուրինության համաթվերը

Տնտեսական աճը 2018 թ. կազմել է 5.2%, իսկ 2019-ին՝ 7.6%: Այդուհանդերձ, 2018-2019 թթ. գրանցված աճի միտումները աճի կառուցվածքի համատեքստում չեն ունեցել բարձր որակ:

2018-2019 թթ. ընթացքում տնտեսական աճին մեծապես նպաստել է ծառայությունների ճյուղը, ինչը, սակայն, հիմնականում պայմանավորված է եղել տնտեսական գործունեության այն տեսակներով, որոնք չեն ապահովում հավելյալ արժեքի ստեղծում և բնակչության կյանքի որակի բարելավում:

ՀՆԱ-ի ծախսման տեսանկյունից 2018-2019 թթ. ընթացքում տեղի է ունեցել տնտեսական աճի մոդելի կտրուկ վատթարացում: Նշված ժամանակահատվածում ՀՀ տնտեսությունը հիմնականում առաջ է շարժվել սպառման մոդելով, ինչը չի նպաստել տնտեսության ներուժի ընդլայնմանն ու կուտակմանը: Մյուս կողմից՝ գրանցվել է ներդրումների շեշտակի անկում՝ ավելի սրելով կաշին-երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման խնդիրը: Մասնավորա-

պես, 2019 թ., նախորդ տարվա համեմատ, կտրուկ արագացել է սպառման աճի տեմպը: Ընդ որում, մասնավոր սպառումն աճել է 12.3%-ով՝ ՀՆԱ-ի աճի նկատմամբ դրսևորելով 9.2 տոկոսային կետով (ավելի քան երկու անգամ, քան նախորդ տարի) դրական նպաստում: Մտահոգիչ է, որ մասնավոր սպառման աճը տեղի է ունեցել ոչ թե բնակչության եկամուտների աճի, այլ ֆինանսական պարտավորությունների (հատկապես՝ վարկերի) կտրուկ աճի հաշվին: Փոխարենը, շարունակաբար նվազել են ներդրումները, ինչի հետևանքով ներդրումների նպաստումը տնտեսական աճին 2018 թ. կազմել է ընդամենը 0.8 տոկոսային կետ, իսկ 2019-ին՝ 0.7 տոկոսային կետ, այն դեպքում, երբ 2017 թ. տնտեսական աճին ներդրումների նպաստումը կազմել է շուրջ 2 անգամ ավելի՝ 1.7 տոկոսային կետ:




Գծապատկեր 2. Տնտեսության ճյուղերի և ՀՆԱ-ի ծախսային բաղադրիչների նպաստումները տնտեսական աճին

Հետևաբար զարմանալի չէ, որ 2020 թ. ՀՀ-ում գրանցված երկու բացասական շուկայի (համավարակի և Արցախյան 44-օրյա պատերազմի) հետևանքով տնտեսական աճի ծախողված քաղաքականության պայմաններում գրանցվել է տնտեսության կտրուկ անկում՝ շուրջ 7.4%-ով: Ընդ որում, անկումային են եղել տնտեսության գրեթե բոլոր ճյուղերը: Զարմանալի չէ նաև այն, որ նախորդ 2 տարիներին սպառումով քաշվող տնտեսական աճի պայմաններում 2020-ին 10.1%-ով կրճատվել է սպառումը (9.7 տոկոսային կետով)՝ բացասական նպաստում ունենալով ՀՆԱ-ի անկմանը:

Օտարերկրյա ներդրումների մասով գրանցված արդյունքները 2018-2020 թթ. ևս մտահոգիչ են: Մասնավորապես, օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) կշիռը ՀՆԱ-ում 2018 թվականից ի վեր գրանցել է կտրուկ նվազող շարժընթաց:

Թեև 2018 թ. ներդրումների ծավալն աճել է, սակայն այդ աճը հիմնականում պայմանավորված է եղել տարվա առաջին եռամսյակում (մինչև իշխանափոխությունը) ներդրումների ծավալի աճով, ինչից հետո ներդրումների աճի տեմպը շարունակաբար դանդաղել է:

Ընդ որում, 2019 թ., նախորդ տարվա համեմատ, ՕՈՒՆ-ի ծավալները կրճատվել են ավելի քան 60%-ով: Սա, իր հերթին, հստակորեն արտահայտում է օտարերկրյա ներդրողների վերաբերմունքը նշված ժամանակահատվածում ՀՀ ներդրումային միջավայրի նկատմամբ:



Գծապատկեր 3. Օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալի շարժընթացը ՀՀ-ում

Նշենք նաև, որ Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից ընդունված «ՀՀ գործարար միջավայրի բարելավման 2019-2024 թթ. ռազմավարություն» ուղղված է գործարարությամբ զբաղվելու բարենպաստ միջավայրի ստեղծմանը՝ բիզնեսի համար վարչարարական բեռի կրճատման, մասնավորապես՝ գործող օրենսդրության պարզեցման և ավելի որակյալ կարգավորումների մշակման, ընթացակարգերի առավելագույնս թվայնացման, շահագրգիռ բոլոր կողմերի հետ ավելի արդյունավետ հաղորդակցության և հետադարձ կապի կազմակերպման միջոցով:

Ռազմավարության հիմնական թիրախն է «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցում մատնանշված ոլորտներում գործարարների համար վարչարարական բեռի և ռիսկերի կրճատումը, որը համաթվում արտացոլված կլինի Հայաստանի համար ակնկալվող միավորների ավելացմամբ (այսինքն՝ լավագույն արդյունքից հեռացվածության կրճատմամբ) և դիրքի բարելավմամբ, մասնավորապես՝ նախատեսվող միջոցառումների արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի գրավչությամբ լինել աշխարհի առաջին 15 երկրների շարքում¹:

Եզրակացություններ: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ ՀՀ գործարար միջավայրում դեռևս առկա են մի շարք խնդիրներ և խոչընդոտներ, որոնք սահմանափակում են վերջինիս զարգացման հնարավորությունները: Անշուշտ, գործարար միջավայրի վրա խիստ բացասական ազդեցություն ունեցան նաև կորոնավիրուսային համավարակը և 44-օրյա պատերազմը: Նշված խնդիրների և բացասական հետևանքների հաղթահարման համար անհրաժեշտ է իրականացնել համակարգային բարեփոխումներ, որոնք կստեղծեն գործարարությամբ զբաղվելու բարենպաստ միջավայր, ինչն էլ իր հերթին կնպաստի ՀՀ գործարար միջավայրի վարկանիշի բարձրացմանը և կայուն դիրքեր զբաղեցնելուն:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Բանբեր ՀՊՏՀ», N1, «Տնտեսագետ» հրատարակչություն, Եր., 2021:
2. Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (գիտաժողովի նյութեր) / ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան

¹ https://www.e-draft.am/projects/1992?fbclid=IwAR0pd96Kf-whwQfxmdIFc6uR2HOT-GWe9Ijbm3iSwLIGdt3s7shx1jLE_8

- տնտեսագիտության ինստիտուտ: Պատ. խմբագիր՝ Վ. Լ. Հարությունյան, Եր., ՀՀԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, 280 էջ:
3. Հայաստանի ներդրումային միջավայրը. իրավական դաշտը և առկա հիմնախնդիրները: Հետազոտություն/Ա. Մանուկյան, Ա. Քթոյան, Եր., Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ, 2019, 70 էջ:
 4. ՓՄՁ ոլորտի գնահատման հետազոտություն Հայաստանում, Հայկական բիզնես կոալիցիա, Եր., 2018:
 5. Fernando A. C., Business Environment, Pearson Education, 2011.
 6. https://www.e-draft.am/projects/1992?fbclid=IwAR0pd96Kf-whwQflxmdIFc6uR2HOT-GWe9Ijbm3iSwLIGdt3s7shx1jLE_8
 7. <https://accountlearning.com/6-important-factors-business-environment-influence-business/?fbclid=IwAR1KajUDyAorWFTYgsnzZyVch4Zg5uKoDqrV82IHVWVtoaqo3FRT35E-o>
 8. <https://documents1.worldbank.org/curated/en/688761571934946384/pdf/Doing-Business-2020-Comparing-Business-Regulation-in-190-Economies.pdf>

МИЛЕНА АГАДЖАНЫН

Менеджмент, бакалавриат, 4-й курс

ДЕЛОВАЯ СРЕДА КАК КЛЮЧЕВОЙ ФАКТОР РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ

Ключевые слова: деловая среда, фактор, препятствие, доклад, стратегия

Изучение и анализ деловой среды, проблема ее улучшения всегда актуальны для развития экономики Республики Армения. Текущее состояние экономики Армении и существующие в ней многочисленные проблемы влияют на деловую среду и ее рейтинг. Существует также ряд общих факторов, влияющих на развитие деловой среды. Наиболее частыми препятствиями развития экономики в нынешних условиях являются периодические изменения законодательства, политические риски, коррупция, несовершенство судебной системы, высокие процентные ставки по кредитам и т.д. С целью решения этих и ряда других проблем Правительством Республики Армения разработана стратегия улучшения бизнес-среды РА на 2019-2024 годы, направленная на создание благоприятной среды для ведения бизнеса.

MILENA AGHAJANYAN

Management, Bachelor's Degree, 4rd Year

BUSINESS ENVIRONMENT AS A KEY FACTOR IN ECONOMIC DEVELOPMENT

Key words: business environment, factor, obstacle, report, strategy

The study and analysis of the business environment and the problem of its improvement has always been relevant to the development of the economy of the Republic of Armenia. The current state of the economy of the Republic of Armenia, with many existing issues, affects the business environment and its rating. There are also a number of common factors that influence the development of the business environment. In the current condition within this process of development, most general obstacles are frequent changes in legislation, political risks, corruption, imperfection of the judicial system, high interest rates on loans, etc. With an aim to solve these and several other issues, the Government of the Republic of Armenia has developed a strategy for improving the business environment of the Republic of Armenia for the years 2019-2024. The latter aimed at creating a favorable environment for doing business.